

# Ազգային Խորհուրդը

## ԿԸ ԴԱՏԱԳՍԲՏԷ

### ԹՈՒՐՔԻՈՅ

#### ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Ամերիկահայ Ազգային Խորհուրդը ապրիլ 11ին հետևեալ հեռագիրը ուղղած է նախագահ Ռուզվելթին, որուն պատճէնը ուղարկած է նաև Պետական Պաշտօնատան և Մերակոյտի ու Ներկայացուցչական Տան Արտաքին Յարարերութեանց Յանձնախումբերուն։—

Սիրելի Պ. Նախագահ,

Հայ ծագումով Ամերիկեան քաղաքացիները քայլ առ քայլ կը հատելին ձեր ամենակարող ղեկավարութեան և ի բոլոր սրտէ ուժ կուտան ձեր քաղաքականութիւններուն, թէ պատերազմը վարելու և թէ արդար՝ և տեւական խաղաղութեան մը հիմը դնելու մարզերու մէջ։

Թեհրանի Ժողովի, Տըմպակթըն Օքսի և Եալթայի Խորհրդաժողովի մէջ առնուած բոլոր քայլերը մեզ առանձնապէս կը շահագրգռեն և արժանացած են մեր ամբողջական օժանդակութեան։ Հաւատացած ենք, որ Սան Ֆրանսիսքոյի մէջ տեւական խաղաղութեան և ապահովութեան համար կազմակերպութեան մը հիմը դնելու ազնիւ ջանքերը յաջողութեամբ պիտի պսակուին։

Կը ցաւինք սակայն տեսնելով, որ Թուրքիան ևս հրաւիրուած է իր մասնակցութիւնը բերելու դեմոկրատ ազգերու խորհրդակցութեանց։ Առաջին Համաշխարհային պատերազմի աւտին, Թուրքիան, որպէս զինակիցը Գերմանիոյ, կռուեցաւ ներկայ Դաշնակիցներու դէմ և, Գերմանիոյ համադորձակցութեամբ, ջարդեց աւելի քան մէկ միլիոն Հայեր և ամբողջ Հայկական նահանգները վերածեց աւերի և ամայութեան երկրի։ Եւ, օգտուելով Անգր-կովկասի մէջ տիրող կացութենէն, ան (Թուրքիան) յափըտակեց որոշ Հայկական հողամասեր, որոնք կը մտնէին Ռուսաստանի սահմաններուն մէջ։

Ներկայ պատերազմի ընթացքին, Թուրքիան, իր կեղծ «չէզոքութեամբ» հարստացաւ ստանալով փոխ—վարձու միլերքներ և միաժամանակ Գերմաններուն տալով կարելի ամէն օժանդակութիւն։ Թուրքիայի այս ընթացքը պատճառ դարձաւ, որ պատերազմը երկարաձգուելի և Դաշնակիցները հսկայական դին վճարեն աւտոր համար։ Ան (Թուրքիան) Ծաշխատական մեթոտներ գործադրեց փոքրամասնութիւններու, Յոյներու, Հրեաներու, Հայերու նկատմամբ, անոնց պարտադրելով այնպիսի տուրքեր, որոնք ենթակաները տնտեսական ոչնչացման ենթարկելու բնոյթ ունէին։

Դաշնակիցներու յաղթանակի նախօրեակին Թուրքիայի յայտարարած պատերազմը Գերմանիայի դէմ, պարզ կեղծիք և մոլորութիւն է և անոր մասնակցութիւնը Սան Ֆրանսիսքոյի Համաժողովին՝ հաւասար իրաւունքներով միւս Դաշնակից ազգերու հետ՝ հակառակ է ազատութեան և արդարութեան բոլոր ըմբռնումներուն, որոնց համար այս պատերազմը կը մղուի։

Հաւատացած ենք, որ Թուրքիայի մասնակցութիւնը այս Համաժողովին, զայն պարտադրեմ պիտի չկացուցանէ մարդկութեան և քաղաքակրթութեան դէմ անոր անցեալին եւ ներկայիս գործադրած ոճիրներու համար։

Վերստինք կը յայտնենք ձեզ, մեր սիրելի Նախագահ, մեր հաւատարմութիւնը և ի բոլոր սրտէ մեր օժանդակութիւնը արդար և տեւական խաղաղութեան մը համար ձեռնարած քաղաքականութեան և ջանքերուն։

Յարգանքներով՝ Չերդ  
ԱՍԵՐ՝ԿԱՀԱՅ Ա.ԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ